ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

ROBERT W. EDWARDS. *The Fortifications of Armenian Cilicia.*— Dumbarton Oaks Trustees for Harvard University, Washington, 1987, 288 p., 1 map, 75 figures, 570 b. & w., 48 color plates.

ՌՈԲԵՐՏ ԷԴՎԱՐԴՍ, Հայկական Կիլիկիայի ամրությունները

Հայկական ամրոցաշինությանը նվիրված սակավաթիվ ուսումնասիրություններին վերջերս ավելացավ Ռոբերտ Էդվարդսի՝ ԱՄՆ-ում լույս տեսած «Հայկական Կիլիկիայի ամրությունները» աշխատությունը, որն ամբողջությամբ նվիրված է Կիլիկիայի հայկական պետության պաշտպանական կառույցներին։ Հեղինակը երեք գիտարշավ է կազմակերպել դեպի Կիլիկիա (1973—1974, 1979, 1981 թթ.), որոնց ընթացքում տեղում ուսումնասիրել, չափագրել և լուսանկարել է այս ընդարձակ տարածքի վրա գտնվող դղյակները, բերդերը, ամրոցները և պարիսակները։ Գրեթե մեկուկես տասնամյակի աշխատանքի արդյունք հանդիսացող այս մեծարժեք մենագրությունը կարող է նոր խթան հանդիսանալ Կիլիկիայի և բուն Հայաստանի ամրոցաշինության, ճարտարապետության ու պատմության ուսումնասիրության բնագավառում։ Այն համալրում է հայկական մշակույթին նվիրված բազմաբնույթ գրականությունը։ Պետք է արժանին հատուցել Ռ. Էդվարդսին, որը կարողացել է հաղթահարել տեղում ուսումնասիրելու և չափագրելու դժվարությունները՝ կապված բերդերի անառիկ տեղադրության հետ, փորձել է առավելագույնը քամել պատմական սկզբնաղբյուրներից, գիտական ուսումնասիրություններից և ճանապարհորդական նոթերից։ Հատկապես նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ պատմական Հայաստանի բերդերի մասին մինչև օրս հրապարակված միակ ուսումնասիրության մեջ[1] հաշվի չեն առնված շինությունների ճարտարապետական առանձնահատկությունները, նկարագրությունները, ավելին՝ դրանց գերակշիռ մեծամասնությունը դեռ չափագրված չէ։ Այդ իսկ պատճառով այսօր հնարավորություն չունենք վերլուծելու պատմական Հայաստանի տարբեր նահանգների պաշտպանական կառույցների ճարտարապետական առանձնահատկությունները և որոշելու կիլիկյան ամրությունների տեղը այդ համակարգում։

Ռ տարբերություն բուն Հայաստանի՝ Կիլիկիայի ամրությունների մասին աշխատությունները նարտարապետական հորինվածքների ուսումնասիրության տեսանկյունից գիտական հիմքերի վրա են գրվել դեռևս մեր դարի 30-ական թթ.։ Գոտալդի ջանքերի շնորհիվ։ Ճարտարապետական հորինվածքների առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից Ռ. Էդվարդսի անմիջական նախորդն է Հանսգերդ Հելենկեմպերը, որը 1976 թ. հրապարակած մենագրության մեջ ուսումնասիրել ու չափագրել է 26 կիլիկյան ամրոց[3]։ Կիլիկիայի հայկական ճարտարապետության նկատմամբ եվրոպական և անդրօվկիանոսյան մասնագետների բացառիկ ուշադրությունը պայմանավորված է նրանով, որ այդ ամրոցների բազմաթիվ մանրամասներ իրենց ազդեցությունն են թողել խաչակրաց ամրոցների հորինվածքների վրա։

Ռ. Էդվարդսի «Հայկական Կիլիկիայի ամրությունները» ուսումնասիրությունը պարունակում է 75 ամրոցի պատմաճարտարապետական ուսումնասիրություն, չափագրություններ և հարյուրավոր լուսանկարներ։ Գիրքը բաղկացած է երկու մասից և երեք հավելվածներից, անձնանունների, տեղանունների, գրականության և օգտագործված քարտեզների ցանկերից։ Առաջին մասում, որը կոչվում է Ներածություն (էջ 3—50) զետեղված են հետևյալ բաժինները՝ 1. Պատմական ետնախորքը, 2. Հայկական ամրությունների բնորոշ գծերը. քսան տարբերակիչ գործոններ, 3. Կիլիկիայի ամրությունների որմնադրությունը, 4. Հայ ռազմական ճարտարապետության տիպաբանությունը, 5. Արաբական, բյուզանդական և խաչակրաց ռազմական կա-

[1] *Մ. Հովհաննիսյան. Հայաստանի բերդերը. Վենետիկ, 1970։ Ըստ Ռ. Էդվարդսի գրականության ցանկի Միքայել Հովհաննիսյանը հրատարակել է նաև «Կիլիկիայի բերդերը» մենագրությունը (1985), որը դեռ չի հասել ուսումնասիրողներին։*

[2] J. Gottwald-ի հոդվածները տե՛ս Byzantinische Zeitschrift, B. 36, 40, 41:

[3] H. Hellenkemper. Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien. Bonn, 1976, S. 104—254.

ուցներ Կիլիկիայում, 6. Հայկական ամրությունների ժամանակագրությունը, 7. Ռազմական ճարտարապետության դերը միջնադարյան Կիլիկիայում. ոչ քաղաքաշինական ստրատեգիայի հաղթահանդեսը։ Երկրորդ մասում ըստ այբբենական հերթականության իրար են հաջորդում կիլիկյան 75 ուսումնասիրված ամրոցների մասին հետազոտությունները (էջ 53—276)։ Հավելվածներն են՝ 1. Վարպետանշաններ, 2. Շաղախի քիմիական քննության արդյունքներ, 3. Թագադրման ցուցակը[4] (էջ 277—280)։

Կիլիկիայի հայկական պետության ամրոցների ու բերդերի ուսումնասիրությունը Դ. Էդվարդսը սկսել է՝ ձեռքի տակ ունենալով իրեն հետաքրքրող տարածքի մանրամասն քարտեզներ, նկարագրություններ և ճանապարհորդական նյութեր։

Կիլիկիայի ամրոցաշինական-ճարտարապետական ժառանգությունը հետաքրքիր և ինքնատիպ է նաև այն պատճառով, որ երկրամասը դարեր ի վեր սահմանային գոտի է եղել Հռոմեական կայսրության և Պարսկաստանի, ապա՝ Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև։ XI դարի երկրորդ կեսից Կիլիկիայում բուստրական իշխանությունը իրենց ձեռքը վերցրին բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ իշխանները, որոնք Բյուզանդական կայսրության և սելջուկյան պետության նվաճողական քաղաքականության հետևանքով Կապադովկիա, Հյուսիսային Ասորիք և Կիլիկիա էին գաղթել Հայաստանից։ Հայկական պետականության վերականգնման համար XII դարում Կիլիկիայում ծայր առած քաղաքական ու մշակութային շարժման գլուխ կանգնեցին Ռուբինյան պայազատները, որոնք կարողացան երկրամասը հետզհետե ազատագրել բյուզանդական խնամակալությունից և, ստեղծելով պաշտպանական կառույցների լայն ցանց, կասեցրին օտար նվաճողների մուտքը դեպի Կիլիկիա։ Հետագայում՝ Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում (1198—1375), անհրաժեշտություն առաջացավ պաշտպանական կառույցների խիտ ցանցի միջոցով ամրացնել երկրի և տարբեր իշխանությունների սահմաններն ու կարևոր առևտրական ճանապարհների մատույցները։ Այդ ընթացքում հիմնադրվում են նոր ամրոցներ, բերդեր ու դղյակներ, վերակառուցվում են ավերակ ռազմական կառույցները և ամրացվում խոշոր քաղաքները։ Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Սմբատ Սպարապետի կիլիկյան հայկական դատաստանագիրքը իրավունքի նորմա է համարում հետևյալը. «Եւ թագաւորին մեն է՝ որ կարէ դեկան շինել՝ եւ քաղաք եւ բերդ՝ եւ մեծ գետոց կանդարայ եւ հոգետուն եւ մեծ ճանփին եւ ի կապենի երկրին։ Եւ թէ իշխան կամենայ յայսոց շինել, նա թագաւորին հրամանաւ շինէ»[5]։ Նշանակում է, թե քաղաք, բերդ և ամրություն կառուցելու համար պահանջվում էր երկրի գերագույն իշխանության թույլտվությունը։ Մի քանի պարբերություն հետո Սմբատը ավելացնում է. «Ի քաղաքի եւ բերդի շենք՝ պատեհ է, որ ամէն երկիրն աւգնեն ամէն իրաւք, զի ամէնին է, եւ տեղոյն բնակիչքն աւելի»[6]։ Ուրեմն՝ նման կառույցների շինարարությանը պետք է օգներ ողջ երկիրը, քանի որ դրանք ծառայում են բոլորին։ Կիլիկյան դատաստանագրքի տեղեկությունները և գրախոսվող աշխատության մեջ ընդարկված հսկայական նյութը թույլ են տալիս եզրակացնել, որ Կիլիկիայում հայտնաբերված ամրոցները առաջին հերթին պետական հետևողական քաղաքականության արդյունք են։

Ռոբերտ Էդվարդսի աշխատությունը արժեքավոր է նաև այն առումով, որ այստեղ առաջին անգամ մեկնաբանված են հայկական ամրոցաշինության կիլիկյան դպրոցի 20 հատկանշական գործոններն ու երեք տիպաբանական վերլուծումները, որոնք, հեղինակի ուսումնասիրության համաձայն, բնորոշ են կիլիկյան ամրությունների հորինվածքին և վարպետների ձեռագրին։ Այդ հատկանիշներով է հեղինակը տարբերակում Կիլիկիայում հայերի կառուցած ռազմական շինությունները արաբական, բյուզանդական և խաչակրաց ամրություններից և որոշում դրանց փոխազդեցության ոլորտները։ Վերլուծելով պատշար վարպետների արվեստը, հեղինակն այն ինը տիպի է բաժանում և բնութագրելով դրանք՝ նշում, թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է բնորոշ հայկական, հռոմեական, բյուզանդական և խաչակրաց վարպետների ձեռակերտերին։ Ելնելով նշված ելակետերից, Ռ. Էդվարդսը Կիլիկիայում զուտ հայկական է համարում 34 ամրոց, իսկ արաբական, բյուզան-

---

[4] Հեղինակը բերում է Սմբատի Տարեգրության մեջ պահպանված Լևոն II-ի թագադրմանը մասնակցած իշխանների ցանկը ըստ Ժ. Դեդեյանի թարգմանության և կցում իր ծանոթագրությունները (հմմտ. La chronique attribuée au connétable Smbat, introduction, traduction et notes par Gérard Dédéyan. Paris. 1980, p. 75—80):

[5] Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert oder mittelarmenisches Rechtsbuch, herausgegeben und übersetzt von Josef Karst. Strassburg, 1905, B. I, S. 17, B. II, S. 13—14.

[6] Նույն տեղում, հ. I, էջ. 23։

դական և խաչակրաց՝ 39 ամրոց։ Գրքում առանձին բաժնով ներկայացված են Կիլիկիայի բյուզանդական, արաբական և խաչակիրների կողմից կառուցված ամրոցները, որոնք շատ հաճախ, հատկապես Կիլիկիայի թագավորության շրջանում, վերակառուցվել են հայ ռազմագետների կողմից։ Այս փաստը վավերագրում են ամրոցների պատերին թողնված մի շարք հայերեն արձանագրություններ (Կոռիկոս, Սելևկիա և Անավարզա)։ Ըստ Ռ. Էդվարդսի հետազոտության Զարդակ (Համո՞ւս), Կոզկաղիս, Կոռիկոս, Մոլեվոն, Սելևկիա, Բիլ Համտուն և Տրապեզակ ամրոցները վերակառուցվելով՝ վերափոխվել են հայկական տիպի կառույցների։

Ռ. Էդվարդսի աշխատության ամենածավալուն բաժինը այսպես կոչված կատալոգն է, որտեղ ներկայացված են հեղինակի կողմից չափագրված 75 բերդերի հատակագծերը, տրված է յուրաքանչյուր բերդի համառոտ պատմությունը և նկարագրությունը, աշխարհագրական ճշգրիտ դիրքը։ Աշխատության այս հատվածը արժեքավոր է հատկապես նրանով, որ հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում գրեթե 30 նոր ամրոցների նկարագրություններ, նորահայտ արձանագրություններ (Թամրութ, Շեմ և այլն), որոնք կօգնեն նոր ճշգրտումներ անելու Կիլիկիայի պատմական քարտեզներում և վերանայելու Կիլիկիայի պատմության և մշակույթի մի շարք խնդիրներ։ Առանձին մանրամասներով գծագրված են պաշտպանական նկատառումներով լուծված մուտքերը, աշտարակները, հրակնատները ու միջնաբերդերի աշխարհիկ կառույցները։ Ի տարբերություն բյուզանդական և հռոմեական ամրոցների, որոնք սովորաբար ունեն կանոնավոր, ուղղանկյուն հատակագծեր, ուր անկյուններում տեղադրված են 3/4-ով դուրս արտահայտված բուրգերն ու աշտարակները, հայկական ամրոցները գծագրվում էին աղատ հատակագծման սկզբունքով, որտեղ շատ հմտորեն օգտագործվում էին տեղանքի բնականից անառիկ ժայռապատերն ու խոշընդոտները։ Ամրոցների պատերի և աշտարակների կառուցվածքը ևս տարբերվում է բյուզանդականից։ Կոր, շրջանաձև, անկյունային պատերը կառուցված են բրգաձև, դեպի վեր նեղացող, իսկ աշտարակները սովորաբար ունեն կիսաշրջան հատակագիծ, երբեմն դեպի դուրս երկարացված պատերով։ Հետաքրքրական է կիլիկյան ամրոցների պարսպապատերի արտաքին մակերևույթների յուրովի մշակումը։ Ամրոցների շատ տարրեր ձևավորվել են մարտ վարելու տակտիկայի հետ կապված։ Ցիլան ամրոցում պահպանվել են պարսպապատերի վերին հատվածները, որոնք լուծված են ուղղանկյուն և երկլանջ ատամնաշարով։ Վերջիններս օգտագործվել են որպես կրակատեղեր և ուղղանկյուն, ձգված, կամարակապ հրակնատների հետ համատեղ հանդիսացել ամրոցների ճարտարապետական անբաժանելի տարրերը։ Յուրովի են լուծված ամրոցների մուտքային հանգույցները։ Սարվանդի քար ամրոցում դեպի գլխավոր մուտքը տանող արահետը աստիճանաբար բարձրացված է։ Դա արված է այն նպատակով, որպեսզի պատի երկայնքով դիրքորոշված աշտարակների միևնույն մակարդակի վրա տեղադրված հրակնատների բարձրությունները մուտքին մոտենալով փոքրանան։ Թշնամին, գտնվելով մուտքի մոտ, ընդունում էր արահետից փոքր բարձրության վրա տեղադրված հրակնատների հարվածի տակ, որը պաշտպանվողներին լրացուցիչ առավելություն էր տալիս։ Հեղինակը մանրամասն նկարագրում է մուտքային հանգույցների մի քանի ընդունված տիպեր։ Այստեղ հատկանշական են փակուղիները, թաղակապ, միջանցքավոր մուտքերը, շինված սրահավոր մուտքերն ու գաղտնանցումները սենյակները։ Ամրոցների կառույցների ծածկերն իրականացված են սլաքաձև, աղեղնաձև և կամարակապ թաղերով։ Գմբեթային ծածկերն առկա են միայն Ցիլան և Լամբրոն ամրոցներում։ Կիլիկյան ամրոցներում հանդիպում են նաև ժայռափոր շրամբարներ, օրինակ Ցիլանում և Գյոկվելիոզլիում։ Հեղինակը մատնանշում է, որ ժայռափոր կառուցվածքները բնորոշ են խաչակիրների կողմից կառուցված ամրոցներին։ Բոլոր կիլիկյան ամրոցներն ունեցել են հուսալի շրամատակարարման համակարգեր, որոնք կապված էին բնական ջրհավաք հանգույցներին։

Գրքի վերջին բաժնում առաջին անգամ ներկայացված են կիլիկյան որմնագիրների վարպետանշաններ, որոնք հեղինակը հավաքել է տարբեր ամրոցների պատերից ու առանձին կառույցներից։ Այս ուսումնասիրությունը լրացնում է հայկական վարպետանշանների հետաքրքիր հավաքածոն։

Գրքին կցված է նաև Կիլիկիայի հայկական պետության քարտեզը, ուր տեղադրված են հեղինակի կողմից չափագրված բերդերն ու ամրոցները, խոշոր քաղաքները, ավաններն ու նավահանգիստները։

Ռոբերտ Էդվարդսի «Հայկական Կիլիկիայի ամրությունները» գիրքը ծանրակշիռ ներդրում է հայկական ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում և չափազանց օգտակար՝ ամրոցաշինությամբ զբաղվող մասնագետների համար։

Ա. Ա. ԶԱՐՅԱՆ,
Ա. Ա. ԲՈՂՈՅԱՆ։